ՄՄԿ մեկնաբանություն 21
Շահութահարկ. վերագնահատված չմաշվող ակտիվների վերականգնում

Հղումներ

- ՀՀՄՍ 8 *Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ*
- ՀՀՄՍ 12 *Շահութահարկ*
- ՀՀՄՍ 16 *Հիմնական միջոցներ* (2003 թ. վերանայված տարբերակ)
- ՀՀՄՍ 40 *Ներդրումային գույք* (2003 թ. վերանայված տարբերակ)

Հարցադրում

1 ՀՀՄՍ 12.51-ի համաձայն՝ հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք բխում են այն եղանակից, որով կազմակերպությունը, հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ակնկալում է փոխհատուցել կամ մարել ժամանակավոր տարբերություններ առաջացնող ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

2 ՀՀՄՍ 12.20-ը նշում է, որ ակտիվի վերագնահատումը միշտ չէ, որ ազդում է վերագնահատման ժամանակաշրջանի հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա, և որ վերագնահատման արդյունքում ակտիվի հարկային բազան կարող է չճշգրտվել: Եթե հաշվեկշռային արժեքի ապագա փոխհատուցումը հարկվող է, ապա վերագնահատված ակտիվի հաշվեկշռային արժեքի և դրա հարկային բազայի միջև որևէ տարբերություն ժամանակավոր տարբերություն է, և այն առաջացնում է հետաձգված հարկային պարտավորություն կամ ակտիվ:

3 Հարցն այն է, թե ինչպես մեկնաբանել «փոխհատուցում» տերմինը այն ակտիվի առնչությամբ, որը չի մաշվում (չմաշվող ակտիվ) և վերագնահատվում է ՀՀՄՍ 16-ի 31-րդ պարագրաֆի համաձայն:

4 Սույն մեկնաբանությունը կիրառելի է նաև այն ներդրումային գույքի նկատմամբ, որը հաշվառվում է վերագնահատված արժեքով՝ համաձայն ՀՀՄՍ 40.33-ի, սակայն ՀՀՄՍ 16-ի կիրառման պարագայում կհամարվեր չմաշվող:

Փոխհամաձայնություն

5 Հետաձգված հարկային պարտավորությունը կամ ակտիվը, որն առաջանում է չմաշվող ակտիվի վերագնահատումից՝ համաձայն ՀՀՄՍ 16.31-ի, պետք է չափվի՝ հիմնվելով այն հարկային հետևանքների վրա, որոնք կառաջանան վաճառքի միջոցով այդ ակտիվի հաշվեկշռային արժեքի փոխհատուցումից՝ անկախ այն բանից, թե ինչ հիմունքով է չափվում այդ ակտիվի հաշվեկշռային արժեքը: Համապատասխանաբար, եթե հարկային օրենսդրությամբ սահմանվում է ակտիվի վաճառքից հաշվարկած հարկվող գումարի նկատմամբ կիրառվող հարկման դրույքաչափ, որը տարբերվում է ակտիվի օգտագործման արդյունքում հաշվարկած հարկվող գումարի նկատմամբ կիրառվող հարկման դրույքաչափից, ապա չմաշվող ակտիվին վերաբերող հետաձգված հարկային պարտավորության կամ ակտիվի չափման պարագայում կիրառվում է վերը նշված հարկման դրույքաչափերից առաջինը:

Փոխհամաձայնության ամսաթիվը

1999 թ. օգոստոս

Ուժի մեջ մտնելը

Սույն փոխհամաձայնությունը ուժի մեջ է մտնում 2000 թ. հուլիսի 15-ին: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները պետք է հաշվառվեն ՀՀՄՍ 8-ի պահանջների համաձայն: